

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանի շնորհավորական խոսքը՝ Բուժաշխատողի օրվա առթիվ 21.06.2020

Հարգարժան բուժաշխատողներ

Շնորհավորում եմ ձեզ՝ մասնագիտական տոնի առթիվ. Ձեր գիտելիքների, դրանք նպատակին ծառայեցնելու, հմտությունների դրսևորման և հետևողականության շնորհիվ հազարավոր մարդիկ բուժվում, ապաքինվում և նոր կյանք են ձեռք բերում, վայելելով առողջ լինելու հաճույքն ու բերկրանքը: Ձեր ուշադրությունը, հոգատարությունն և մարդասիրական վերաբերմունքը, ձեր յուրաքանչյուր հուսադրող խոսքը ստիպում է, որպեսզի հիվանդը հավատով և լավատեսորեն լցվի իր վաղվա օրվա հանդեպ :

Առանձնահատուկ շնորհակալություն նաև այն բուժաշխատողներին, ովքեր վերջին ամիսների ընթացքում, մոռանալով իրենց ընտանիքն ու անձնական կյանքը, լծված են համավարակի դեմ պայքարին :

Շնորհակալություն եմ հայտնում նաև բուժույրտի մնացած աշխատակիցներին, շտապօգնության ծառայության բոլոր վարորդներին, տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց:

Բուժաշխատողի մասնագիտական տոնի շրջանակներում ևս պետք է փաստենք, որ մեր երկրում իրականացվող քաղաքականության արդյունքում ներկայումս նոր որակ և նոր մոտեցումներ են հաղորդվում առողջապահության ոլորտի զարգացմանն ու կատարելագործմանը:

Թո՛ղ որ, համակարգի արդյունավետության բարձրացմանը միտված բարեփոխումները նորովի լիցքեր հաղորդեն նաև բուժաշխատողների գործունեությանը և նպաստեն որակյալ ու պատշաճ բուժսպասարկման ապահովմանը:

Կրկին շնորհավորելով՝ ցանկանում եմ, որ առողջապահության համակարգի բոլոր աշխատակիցների առօրյան նշանավորվի դրական զարգացումներով, ձեռքբերումներով և Ձեզ մշտապես ուղեկցեն անձնական ու աշխատանքային հաջողությունները:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյան